

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԿԱՐԵՄԻՐՆԵՐԸ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՅՈՒՂԻ ԱՌԱՋ
I

Մեր կոչք հայ հասարակութեանը՝ դպրուցական ֆօնդի մասին՝ խոր և սիրալիր արշագանք զտաւ մեր ազգի բոլոր խաւերում և, ինչպէս պէտք էր ենթադրել առաջուց, զայրոյթ պատճառեց «Կովկասի Լրաբերին»։ Կարեմիրները արդէն տեսնում էին որանիւրով հացը իրանց բերաններին այնքան ժօտ, և յանկարծ պանիրն էլ չը կայ, հացն էլ...

Պ, Կարեմիրը շօշափուր է մեր անձը և համարում է մեզ Շամսկղբունք, անզեկ, առառափաստ միտք։

Մենք չը գիտենք և չենք ճանաչում այն պարոնին, որ ստորագրվում է Կարեմիր ծածկանունով։ Մենք ՅՈ տարիներ ստորագրել ենք մեր գրածները, և դժուար չենք ճանականաւ, թէ արդեօք մենք ունեցե՞լ ենք սկզբունքներ, գաղափարներ, թէ մատնել ենք նրանց վասարար և անփոյթ։

Բայց այսօրվայ Կարեմիրը զուցէ երէկ գայ կանաչն էր և վազվայ սկը կը լինի։

Իսկ մենք եղել ենք և կը մեանք միշտ Գրիգոր Չալխուշեան...

Ինչնամն է եղել մեր յանցանքը։

Մենք... ազգասէր ենք։ Ազգասէր, հաւկանում էք. դա նշանակուր է զող, մարդասպան՝ Կարեմիրների կարծիքով։

Եւ Կարեմիրը ծազրում է մեզ, ծազրում է ազգասիրութիւնը, ծազրում է էջմիածինը, ծազրում է և ծազրում...

Շերը մեզանում ազգային մի գործ է մկանում, ամենից առաջ նոր նախիջեանից ձայն է բարձրացնում Գը, Չալխուշեանը։

Դուք զարմանում էք, շուարված, կարծեսպատիւ է բերում մեզ, եթէ առաջինը մենք ենք հրապարակ զուրս գալիս գործնական կերպով ազգային զործը կատարելու, պատկելու, բայց ոչ, մեր մեղքը մեծ է և անքաւելի. ճնա չէ ճանաչում ոչ... վէճ, ոչ... կոփու, ոչ գաղափարների ու սկզբունքների խարութիւն և բաղխուր, միայն թէ լինի... փողը։

Ահա թէ բանը ինչնամն է։ Փոխանակ վիճելու, կուելու և զաղափարների ու սկզբունքների խարութիւն որոնելու՝ մենք համարձակվում ենք փող ժողովելու, որպէսզի ազգային զործը... մկանի, զլուխ գայ, իրագործվի...

Արժէ կանդ առնել և ապացուցանել այդ կարծիքի ողորժելի անհիմութիւնը։

Հայը անուս է, ողորմելի վիճակի մէջ է։ Հայը այն ժամանակ բաղդաւոր կը լինի, երբ նա լինի լուսաւորված։

Վէճով և կուով կարելի չէ լուսաւորել.

Պէտք են դպրոցներ, դպրոցներ և դարձեալ դպրոցներ...

Դպրոց բանալու և պահպանելու համար պէտք է փող։

Ուրեմն մեր պարտականութիւնն էր՝ անձամբ տալ այնքան, ինչքան կարող ենք, դիմել սրաննարան և մեծ ծանրութիւն ու սերիս զրած՝ հանգանակել մի խոշոր դումար, առնել ձեռք գրիչ և դիմել կոչով հայ հասարակութեան։

Այդ բոլորը մենք կատարեցինք, կատարում ենք. և սրանով միթէ մենք մեզանչեցինք...

Միթէ մենք իրաւունք չունէինք պահանչելու, որ գոնէ Կարեմիրները մեզ չը խանգարեն իրանց անհամ, անզերջ վէճերով և

ասէ-կօսէներով...

Զը զիտէք գործել, խուսափում էք, գունէ լսեցէք:

Եթէ զպրոցներ մենք բանալու լինէինք քիւրդի, թիւրքի, պարսկի համար, եթէ մենք գործէինք յանուն մարդկութիւն, Կար-Միրը մեզ կը հասկանար Բայց մենք գործել ենք և գործում մեր տառապեալ, խեղճ, թշուառ անհետացող տպգի համար, և Կար-Միրի ըերանը փրփրում է բարկութիւնից՝ ազգասէրներ, ազգասիրութիւն-կարծես հայնոյում է՝ աւազակներ, աւազակութիւն...

II

Կար-Միրը ասում է, որ մենք դրամի երկրագու ենք:

Երկրագուն նա է, ով շահնլում է դրամից: Դրանից շահ մենք երեք ունեցած չենք: Երբէք մենք ծխած չենք և խնկած մեր հարուսաներին, մարափել ենք նրանց, թշնամիներ ենք շատերի հետ, բայց միշտ, երբ տեսել ենք հարուստի ճոխ զոհողութիւնը աղդին, մենք խրախուսել ենք և գովկել եղել է դա Լազարեան, թէ Մանթաշեան, թէ Ժար-հարեան, ողջը մէկ է մեզ համար...

Բայց թարախով մենք շրջել ենք, այս, շրջել ենք և պիտի շրջնեք...

Ի՞նչ անենք, մեր հայ իրականութիւնը ծանը է, ազգը՝ փոքր և թշուառ Մեղանում բոլոր հաստատութիւնները՝ լրագրութիւն, թատրօն, զպրոց՝ կարօտ են աշակցութեան, իսկ ինքնօգնութեան զաղափարը մեղանում թոյլ է, նուազ...

Պէտք չէ ծաղրել. ում էք ծաղրում. ձեզ էք ծաղրում. ի՞նչ օգուտ անամօթարար թքել որբանի վրա, որ սնել է ձեզ...

Վէճերով, կոխով մինչի այսօր դուք. ու-

չինչ արած չէք: Սխալվում եմ, արել էք, արել էք շատ բան, դուք քայքայում էք, քանդում էք ազգի տունը օրէցօր, անժիա, յամառ, չը տեսնելով անգամ որ կտրում, կտրում էք ծառի այն ճիւղը, որի վրա նստում էք, նստում և վատ թէ լաւ կերպակվում... Այդ ճիւղը կարող առանց ձեղի էլ, ողորմելիներ, կը գտնվին Ռւզում էք օ՞ր առաջ կարել: Խղճացէք, գթացէք, եթէ միայն խիղճ և գութ կան ձեր մէջ...

Դամառ-Քաթիսան մեռնում էր, հիւանդ, սովից:

Պէտք էին մահարձաններ կանգնել նրա և Նալբանդիանի վրա:

Յետոյ սով, դարձեալ սով, յետոյ կոտորձներ, այժմ գպրոցների հարց...

Մենք մեր պարտքը կատարում էինք, և գիմում էինք կոչով: Մեզ լսում էին, տառլիս էին փող, լսում են և այժմ:

Խակ դժւք: Դուք ծաղրում էիք և ծաղրում էք այժմ: Բանից դուրս է գալիս, որ մենք սխալվել ենք և, փոխանակ վիճելու, ազգի վէրքը զարմանելու համար ժողովում ենք փող: Դուք ասում էք, որ պէտք չէր սպիտանի այդ վէրքի համար, և ձեր անհամ վէճերը կարծես լինեն աղ և պղպեղ անամօթ և անխիղճ կերպով ցանած այդ վէրքի վրա... Խղճացէք և գթացէք, եթէ միայն խիղճ ու գութը գեռ մեացել են ձեր մէջ...

III

Էջմիածինը փուշ է դառել ձեր աչքերում: Ի՞նչ ունենք մենք հայերս էջմիածնից ջոկ: Ոչինչ: Դուք այդ լաւ գիտէք, հասկանում էք և ցանկանում էք միայն մի բան՝ քարուքանդ անել էջմիածինը, որին ազգը հաւատում է, որը ազգի կենտրօնն է, որը ազգը ցոլում է:

Մենք ընդունում ենք էջմիածին, կաթուզիկա և միաբաններ:

Էջմիածինը և Կաթողիկոսը եղել են մեզ համար այն սուրբ կապերը, որոնք պահել են ազգը Այդպէս եղել է մեզ համար հրեսուն տարի առաջ, այդպէս է և այժմ մնացել:

Մենք ընդունում ենք, որ էջմիածնուուրաքերը երբեմն եղել են վաստ, ընդունում ենք, որ կարգերը այստեղ մինչև օրս լաւ շնու:

Բայց նախ դուք ստում էք, թէ էջմիածինը հարուստ էր նա ունի կալուածքներ, որոնք կարօտ են մեծ գումարների և մեծ խնամքների. և քանի որ այդ գումարները և այդ խնամքները պակասում են, կարելի չէ խօսել էջմիածնի հարստութեան մասին Ուրեմն դպրոցական ֆօնդի կարերութիւնը մեծ է և անհրաժեշտ:

Դուք լաւ գիտէք, որ հանգուցեալ Մատթէոս Իզրիլեանի օրից և մանաւանդ այժմ ամեն մի կօպէկ մտնում է ժապաւինած մատեան սինօդի միջոցով, որ զեղծումներ կարող չեն տեղի ունենալ, որ հաւատալ կարելի է և պէտք է, և յանցանք է ձեր կողմից լրագրում յայսնել անվատահութիւն, որպէս զի վասպի ֆօնդի սուրբ գործը Ձեր խելքով, եթէ գրական ֆօնդ լինելու չէ, թող կորչի դպրոցականը: Ամօթ չէ այդպէս մտածել անգամ...

Ազգասիրութիւնից յետոյ ձեզ՝ դայրացնում է էջմիածինը իր խունկով, իր մոռմով...

Հեռու Հայաստանում ձեր կար-Միրների աշխատանքը արդէն պատկիր է: Դուք լսեցիք ուսւ հրապարակախօս Օլգենինի ասածը, թէ հայի հաւատը, որ պահպանում էր ազգը, նուազում է, փշանում է, հայը հե-

ռանում է եկեղեցուց, մոռանում է լեզուն և անհետանում է, մինչեւ ձեր՝ պաղապարականներից վէճերը, անմիութիւնը, թշշնամական յարաբերութիւնները սաստկանում են և թուլացնում ազգը: Այդ պնդողը Օլգենին է, որը աւելի հայասէր է, քան թէ դուք բոլոր այսպէս ասած պաղապարականներդ...

Մարում են հայի ճրագները և մարում են հայերի ձեռքով, Կար-Միրների ձեռքով...

Փշել-հանգնել հեշտ է մեր ճրագները, որ, աւազ, միշտ միայն պլազացել են իրանց աղօտ լոյսով: Պէտք էր խնամել, պահպանել, բայց դրա համար պէտք էր սիրել: Դուք գիտցաք միայն վիճել և ատել...

Զեզանից սէր կարելի չէր սպասել: Էջմիածնի կենտրոնական ժողովին դուք Կար-Միրներդ ուղում էիք կաթողիկոսին վունտել վանքից և այն տասնեակ հազար դեսեատին կալուածքները, որոնց մասին դուք խօսում էք այժմ, ցանկանում էիք տալ թուրքին և քիւրդին, իսկ նոյնմբեր ամսում Թիֆլիսում, երբ մենք բոլորս զբաղված էինք հայ դատը պաշտպանելու հարցով, դուք Կար-Միրներդ ելաք և ասացիք, թէ թիւրքը և քիւրդը մինոյն մարդիկն են, ինչպէս և հայերը, պէտք է նրանց կերակրել, ուսում տալ, և դուք ցաւում էիք թիւրքի և քիւրդի մասին և մոռանում էիք միայն հային...

Զորն ասեմ կամ գորն խոստովանիմ...

Ձեր կար-Միրների քարոզներից միշտ փշել է մեռեալների հօտ... մեր հայերին երեսին...

Խունկ ու մոմը դուք պահի, էք և պահում էք թիւրքի, քիւրդի, հայ այն մարզ-

կութեան համար և վախենում էք միայն մի բանից՝ չիցէ թէ ձեր խունկը բուրէ և մեզ, և ձեր մոմը մեր ազգը ևս լուսաւորէ...

17

Դուք ասում էք, թէ ցանկանում էք կիստօների հետ ապրելու կը ցանկայինք, որ դուք կիստօների համար ապրէիք:

Արդեօք այն դպրոցները, որոնց համար կազմվում է դպրոցական ֆօնդը, կիստօների համար չմ: Կարիք չը կայ կիստօների հետ ապրել և կիստօներին մոլորեցնել, պէտք է կիստօների համար ապրել, աշխատել, նրանց կարիքը հոգալ: Գուցէ վախենում էք, որ կը լուսաւորվեն և կը հասկանան ձեզ՝ անկոչ վարդապետներիդ և կը վռնտեն ձեզ: Անհամ, անվերջ վէճերով և խօսքերով այնքան դուք խարեցիք ազգը: Արդէն ձեզ հասկանում են:

Զէ, կիստօները ձեզ պատրուակ չեն լինի, քանի որ դուք խոստովանում էք, թէ գնում էք դպրոցի կողքին անակ զրի տօնը, մէկը քեզ միւսը ինձ, իսկ երկուսն էլ ազգին...»:

— «Միւսը ինձ», — ահա ուր է թաղված շան գլուխը:

Դուք համաձայն էք, Կար-Միրներ, որ մենք աշխատենք, մուրանք և ժողովենք այդ անիծեալ փողը, միայն, միայն:

— Միւսը ինձ...

Դուք էլ ուզում էք ստանալ այդ փողը, իբր գրական գործիչ և պահանջում էք, որ մենք կիսենք, կէսը տանք դպրոցին, կէսը ձեզ...

Ճաշակներդ լաւ է և ախորժակներդ մեծ, բայց քանի որ այժմ դպրոցական ֆօնդն է կարեւորը, նա պիտի բռնէ առաջին տեղը:

Խնդրեմ ասացէք, այդ բոլորը՝ հայ մա-

լուլը, գիրքը, հայ միոքը, բարեգործականը, հրաշարակչականը, գրամատիկականը, դուք Կար-Միրներդ էք ստեղծել թք միայն գուք վասում էք, կործանում, տապալում այդ գեղեցիկ պարգևները, որ տուել են ձեզ տասնհակ տարիներ առաջ ուրիշ գործիչներ, որ գիտէին վիճել, բայց գիտէին և գործել:

Նորանախիջևանը, որ տալիս է 150 հազարից աւելի, ընդունում է դպրոցական ֆօնդ և ճանաչում է միայն եջմիածինը: Մենք հասկանում ենք լաւ, որ այստեղ ոչ մի սկզբունքի և գաղափարի հարց չը կայ: Մենք տեսնում ենք ձեր կարկառած ձեռքերը՝

— Միւսը ինձ:

Եւ մենք պատասխանում ենք՝

— Վեցըրէք ձեր երկար ձեռքերը և շարունակեցէք ձեր անմիտ, անվերջ, անհամ գէճերը...

Մենք հասկանում ենք և գրական ֆօնդի կարևորութիւնը ու ժամանակին կը նպաստենք և գրական ֆօնդի իրագործման, բայց նախ և առաջ դպրոցական, միայն դպրոցական ֆօնդը այժմ պիտի լինի մեր նպատակը:

— Միւսը ինձ, միւսը ինձ...

Կար-Միրը հէնց այդպէս էլ պէտք է սկսէր իր յօդուածը. ինչ կարիք կար խօսել սկզբունքների մասին և ընդդէմ փողի, քանի որ փող է խնդրում և երազում պանիրով հաց, պանիրով հաց, որ այնքան մօտ էր նրա բերանին և որը ընկնում է բերանից...

Գնա հասկացիր Կար-Միրների լեզուն:

Գ. Զալիսուշիան